ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4308-Ա « 03 » սեպտեմբերի 2026թ.

ԵՐԵՎԱՆ, ԱՐԱԲԿԻՐ, ԼԵՌ ԿԱՄՍԱՐ ՓՈՂՈՑ Հ.15/4 ԵՎ Հ.15/6 ՀԱՍՑԵՆԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻՆ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԱՎԻԹ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ԵՎ ԱՐՏԱՇԵՍ ՀԱՅՐԻԿԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Դավիթ Արծրունու Կիրակոսյանի (ծնված 29.01.1991թ.) և Արտաշես Հայրիկի Կիրակոսյանի (ծնված 18.09.1958թ.) դիմումը: Երևանի Արաբկիր, Լեռ Կամսար փողոց հ.15/4 և հ.15/6 հասցեներում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 178.78քմ, որից 117.0քմ մակերեսով հողամասը Դավիթ Արծրունու Կիրակոսյանին և Արտաշես Հայրիկի Կիրակոսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող հողամասն է (անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման 26.02.2028թ. հ.26022018-01-0287 և 08.06.2015թ. հ.08062015-01-0100 վկայականներ):

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի 28.08.2025թ. հ.ԱՏ-28082025-01-1089, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 17.02.2026թ. հ.Հ-1016 գրությունները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 24.08.2026թ. հ.20-Ել-21021 եզրակացությունը, համաձայն որի Երևանի Արաբկիր, Լեռ Կամսար փողոց հ.15/4 և հ.15/6 տների զբաղեցրած և դրանց սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1, 2, 3 կետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածով.

1. Վերականգնել Երևանի Արաբկիր, Լեռ Կամսար փողոց հ.15/4 և հ.15/6 հասցեներում գտնվող գույքային միավորների նկատմամբ Դավիթ Արծրունու Կիրակոսյանի և Արտաշես Հայրիկի Կիրակոսյանի սեփականության իրավունքը բնակելի տների զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 117.0քմ մակերեսով հողամասին կից 61.78քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 61.78քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետի կողմից հաստատված հատակագծով:

3. Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 10.09.2024թ. հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը, Երևանի Արաբկիր, Լեռ Կամսար փողոց հ.15/4 և հ.15/6 հասցեներում գտնվող 178.78քմ հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

6. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ